

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. փետրվարի 11-ի

նիստի /արձ. 8/

1. 2015-2016 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատաման ընթացքը համարել բավարար,
 - 1.1 Թատրոնի ֆակուլտետի ավարտական աշխատանքների համար առավելագույն տևողությունը սահմանել 70 րոպե,
 - 1.2 2015-2016 ուս. տարվա ավարտական ներկայացումների ցուցադրումն անխափան կազմակերպելու նպատակով հանձնարարել ուսանողական թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանին կազմել հստակ ժամանակացույց,
 - 1.3 հանձնարարել Թատրոնի ֆակուլտետի դեկան Է. Հեքեքյանին և Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի վարիչի ժ/պ Ռ. Բաբայանին ամբիոնում քննարկել, ընտրել և ներկայացնել ավարտական 2 ներկայացում՝ ՀՀ Մշակույթի նախարարության կողմից նախատեսվող ֆինանսավորումը հատկացնելու համար,
 - 1.4 Հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին կուրսերի ղեկավարների հետ կնքվող պայմանագրում առավել հստակեցնել կուրսի ղեկավարի պարտականությունները, ամրագրել ավարտական կուրսում կուրսի ղեկավարի բացակայության թույլատրելի ժամաքանակը:
2. Հաստատել «ԵԹԿՊԻ-ում ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպման կարգ»-ը նոր խմբագրությամբ:
3. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ԵԹԿՊԻ-ում ուսուցանվող մասնագիտությունների գծով 2014-2015 ուս. տարվանից փորձաշրջանի կարգավիճակով ներդրված մասնագիտական կրթական ծրագրերի արդյունքները համարել բավարար:
Հիմք ընդունելով փորձաշրջանի դրական արդյունքները հաստատել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ներքոհիշյալ մասնագիտությունների 2014-2015 և 2015-2016 ուս. տարիների մասնագիտական կրթական ծրագրերը՝ 2014-2015 ուս. տարվա ՄԿԾ-ները ուժի մեջ համարելով 2014թ. սեպտեմբեր ամսից.

I Բակալավրի կրթական ծրագրով

1. Դերասանական արվեստ
2. Ռեժիսուրա

3. Պարարվեստի ռեժիսուրա
4. Պարարվեստ
5. Կինոարվեստ
6. Օպերատորություն
7. Գեղանկարչություն
8. Թատերագիտություն
9. Սոցիալ-մշակութային գործունեություն (արվեստի կառավարում)
10. Կինոգիտություն
11. Գրական ստեղծագործություն

II Մագիստրոսի կրթական ծրագրով

1. Դերասանական արվեստ
2. Ռեժիսուրա
3. Պարարվեստի ռեժիսուրա
4. Կինոարվեստ
5. Օպերատորություն
6. Գեղանկարչություն
7. Թատերագիտություն
8. Սոցիալ-մշակութային գործունեություն (արվեստի կառավարում)
9. Կինոգիտություն
10. Գրական ստեղծագործություն

4. Հաստատել 2016թ. նախատեսվող գիտաժողովների խորագրերը և ժամկետները.

- «Պատմություն և արդիականություն» - մարտ ամսին,

- «Ժամանակակից թատրոնի խնդիրները» - հոկտեմբեր ամսին,

- Գիտաժողով նվիրված ՀՀ անկախության 25 -ամյակին - նոյեմբեր ամսին,

4.1 «Ժամանակակից թատրոնի խնդիրները» խորագիրը կրող գիտաժողովը կազմակերպել միջազգային ձևաչափով և այդ նպատակով համագործակցել «Արտֆեստ» միջազգային թատերական փառատոնի նախագահ Ա. Ղուկասյանի հետ:

5. Հաստատել ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. փետրվարի 1-ի նիստի որոշումը Համազգային հայ կրթական և մշակութային միության հետ համագործակցելու և «Հայրենի հող» խորագրով կարճամետրաժ ֆիլմերի համատեղ մրցույթ կազմակերպելու վերաբերյալ,
 - 5.1 հանձնարարել Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկան Ա. Երզինկյանին կազմակերպել գործընթացը:
6. Արտադրական պրակտիկայի վերաբերյալ ուսխորհրդի կողմից բարձրացված հարցն ուսումնասիրել ֆակուլտետներում:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան